ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2023թ. դեկտեմբերի 18 N 517-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N1550-Լ որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2018 թվականի փետրվարի 13-ի թիվ 01/18.11/930-18 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ներին ամրացված անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու հանձնաժողով:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ներին ամրացված անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության պետական գույքի

կառավարման կոմիտեին հանձնելու հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2018 թվականի փետրվարի 27-ի N19-Ա կարգադրությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 12/19/2023 09:47:22 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2023 թվականի դեկտեմբերի 18 N 5174 որոշման

ԿԱԶՄ

Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ներին ամրացված անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու հանձնաժողովի

1. Հ. Ստեփանյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ: /Հանձնաժողովի նախագահ/

2. Մ. Եդիգարյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ:

3. Ա. Սիմոնյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ:

4. Ա. Ղազարյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության խորհրդական:

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Восстановимая подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 20140501144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ